

1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13–Ի ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ Հայաստանյան արդի պատմագիտության գնահատմամբ (1991–2021 թթ.)*

Բանալի բառեր – Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Մոսկվայի պայմանագիր, Կարսի պայմանագիր, Հայկական հարց, պետությունների իրավահաջորդություն, Վ. Վիլսոնի իրավարար վճիռ, հայոց պահանջատիրություն, Արևմտյան Հայաստան, Կարս, Արդահան, Սուրմալու, Նախիջևան:

Մուտք

Հայկական հարցին վերաբերող միջազգային դիվանագիտական փաստաթղթերի շարքում թերևս ամենավիճելի են ու գնահատման առումով ամենաբարդը միմյանց հետ տրամաբանորեն կապված 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի⁶¹ և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերն են:

Վերոնշյալ երեք պայմանագրերից հայ պատմագիտության մեջ ամենաքննարկվածը Մոսկվայի պայմանագիրն է, ամենաթերագնահատվածը՝ Կարսի պայմանագիրը, չնայած որ 1921 թ. հոկտեմբերի 13-ից առ այսօր հայ-թուրքական հարաբերությունները կարգավորվում են հենց այս պայմանագրով⁶²: Թուրքիայի համար դրա կարևորությունը լուսարձակվեց 2008 թ. սկսված հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի համատեքստում՝ 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված, սակայն կարճ ժամանակ անց սառեցված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններից մինչև Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. աշնան ադրբեջանա-թուրքական ագրեսիայի արդյունքներն ու հետևանքները:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2021:

61 Մոսկվայի խորհրդա-քեմալական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրն իրականում ստորագրվել է մարտի 18-ին, սակայն փաստաթղթերում թվագրվել է մարտի 16-ով: Դրա պատճառների մասին տես **Հակոբյան Ա. Ս.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., «Գիտություն», 2010, էջ 96, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий в 2-х томах. Сост., отв. ред., авт. предисл. и коммент. **Ю. Г. Барсегов**, т. 2, ч. 2, М., «Гардарик», 2002, էջ 427-428, **Казанджян Р.**, К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г., «Вестник общественных наук», НАН РА, 1999, N 1, էջ 183-187:

62 Տես **Հովհաննիսյան Լ. Հ.**, Հայկական հարցի 1915-1923 թթ. պատմության հիմնահարցերի լուսարանումը հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2015 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2020, էջ 248-285:

1. Կարսի պայմանագրի կնքման ռազմաքաղաքական պայմանների և նպատակների մասին

Վերջին երեսուն տարիներին Հայաստանում լույս տեսած պատմագիտական աշխատություններում շեշտվում է, որ Կարսի պայմանագիրն անհնար է ուսումնասիրել և գնահատել՝ տարանջատելով այն Մոսկվայի պայմանագրից, քանի որ երկուսն էլ վերաբերում են Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքների զավթմանը: Այդ իրողությունն ավելի է ընդգծվում Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով, ըստ որի՝ Ռուսաստանը պարտավորվում էր ձեռնարկել քայլեր, որպեսզի անդրկովկասյան հանրապետությունները Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ձևաչափին Մոսկվայի պայմանագրի՝ անմիջականորեն իրենց վերաբերող հոդվածները: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նախքան Կարսի կոնֆերանսի գումարումը Ռուսաստանը և Թուրքիան արդեն վավերացրել էին Մոսկվայի պայմանագիրն ու 1921 թ. սեպտեմբերի 22-ին, առանց սպասելու Կարսի պայմանագրի ստորագրմանը և պարզելու, թե Մոսկվայի պայմանագրի որ դրույթներն են անընդունելի Անդրկովկասի հանրապետությունների համար, հենց Կարսում փոխանակել էին վավերագրերը⁶³: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գալուստ Գալոյանն** այդ իրողությունը բացատրում է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ոչ միայն Անդրկովկասում տիրող իրադրության, այլև Հայկական հարցի լուծմամբ շահագրգիռ պետությունների քաղաքականության փոփոխությամբ: Նա նշում է, որ Խորհրդային Ռուսաստանը սկսեց հանդես գալ իր դաշնակից Խորհրդային Հայաստանի շահերի պաշտպանությամբ, «բայց չէր ձգտում հանուն դրանց կորցնել քեմալականների հետ ձեռք բերած բարեկամությունը և նրան վերջնականապես հրել Աստանտի գիրկը»⁶⁴: Քեմալական Թուրքիան իր հերթին ձգտում էր չկորցնելու 1920 թ. Հայաստանի դեմ զավթողական պատերազմի ընթացքում նվաճած տարածքները և «ատամներ էր ցույց տալիս» Խորհրդային Ռուսաստանին, երբ վերջինս փորձում էր պաշտպանել Հայաստանին⁶⁵: Մյուս կողմից՝ խորհրդայնացումից հետո Հայաստանն անմիջապես զրկվել էր դաշնակից տերությունների թեկուզ թույլ պաշտպանությունից և հայտնվել նրանց հակառակորդների ճամբարում: Թեև այս փաստն ավելորդ էր դարձրել քեմալական Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի՝ մինչ այդ զաղտնի պահվող մերձեցման ձգտումները, սակայն ռուս-թուրքական բանակցությունների սկզբից քեմալականները հենց այդ պետությունների գործոնով էին ձնշում գործադրում Խորհրդային Ռուսաստանի վրա՝ իրենց ցանկալի զիջումները կորզելու նպատակով: Թուրքական դիվանագիտությունն իր այս հաշվարկներում չսխալվեց: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, ապա, Գ. Գալոյանի համոզմամբ, նրանց դիվանագիտության ռազմավարական նպատակը հանգում էր ռուս-թուրքական հարաբերությունների սրմանը՝ ընդհուպ զինված առձակատում: Ուստի եվրոպական ազդեցիկ պետությունները մրցում էին միմյանց հետ, թե ով առաջինը

63 Տե՛ս **Հովհաննիսյան Լ. Հ.**, Ռուս-թուրքական գործակցությունը և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը հայաստանյան պատմագիտության գնահատմամբ (1991-2020 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», Եր., ՀՀ ԳԱԱ, 2021, N 1, էջ 20-46:

64 **Գալոյան Գ. Ա.**, Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923), Եր., «Գիտություն», 1999, էջ 402-403:

65 Տե՛ս նույն տեղում, էջ 403:

կիրառվելու Սևրի պայմանագրից, որպեսզի առավել նպաստավոր պայմաններով ամրապնդել իր դիրքերը Թուրքիայում⁶⁶:

ԸԸ ԳԱՄ ակադեմիկոս **Հրանտ Ավետիսյանի** գնահատմամբ՝ խորհրդա-քեմալական գործակցությունը և դրա հետևանքով ստորագրված Մոսկվայի և Կարսի պայմանագրերը հերթականն էին Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ թուրքական ռազմական ուժի և դիվանագիտության փոխկապակցված ու տրամաբանական հաջորդականությամբ իրականացված քայլերի շարքում, որոնք նպատակաուղղված էին թուրքական տարբերակով Հայկական հարցի վերջնական լուծմանը, այսինքն՝ Հայաստանն իբրև համաթուրանական պլաններն արգելակող պատվար վերացնելուն: Այդ պայմանագրերով թուրքերը հասան Ադրբեջանի օգտին Նախիջևանի ու Շարուր-Դարալագյազի բռնակցմանը՝ Հայաստանին զրկելով Զանգեզուրի հետ լիարժեք կապի հնարավորությունից: Թուրքիային անցան Սարիղամիշը, Կարսը, Կաղզվանը, Սուրմալուն և Բգդիքը: Դրանով Հայաստանին հասցվեց տնտեսական մեծ վնաս՝ երկիրը զրկելով վառելիքով, հացահատիկով, աղով և այլ օգտակար հանածոներով հարուստ կենսական շրջաններից, սպառնալիքի տակ դրվեց Հայաստանի անվտանգությունը, անհնար դարձավ հայ գաղթականության տունդարձի կազմակերպումը: Զուգահեռաբար շրջանառության մեջ դրվեց արևմտահայկական տարածքների ու Կարսի նահանգի ի սկզբանե թուրանական լինելու թեզը: Թուրանական ցեղեր համարելով մինչև անգամ Հայկական լեռնաշխարհի բնիկներին՝ բիայնացիներին՝ բացառվեց հայերի իրավունքն այդ տարածքների նկատմամբ, այսինքն՝ թուրքական պատկերացմամբ «վերացվեց» Հայկական հարցը: Դրանով նաև սկիզբ դրվեց խորհրդային իշխանության տակ անցած Նախիջևանի, Շահթախթի, Շարուր-Դարալագյազի, Արցախի և հայկական կից հողամասերի վրա թուրքերի «իրավունքները» տարածելու քաղաքականությանն ու քարոզչությանը, որի ականատեսն ենք այսօր: Մոսկվայի պայմանագրով Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ գործված անարդարությունը վերացնելու փոխարեն 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի հինգ անդամների վճռով «Արևելքում խորհրդային իշխանության առաջապահիկ» Ադրբեջանին մատուցվեց Լեռնային Ղարաբաղը: Ճիշտ է, 1921 թ. իր «կորցրած հողերի» վերադարձի հարցը խորհրդային կառավարությունը բարձրացրեց Պոտսդամի միջազգային խորհրդաժողովի օրերին՝ 1945 թ. հուլիսին, սակայն 1953 թ. մայիսի 30-ին Մոսկվան Հայաստանի ու Վրաստանի անունից հրաժարվեց Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից՝ «բարիդրացիական հարաբերությունները պահպանելու և անվտանգությունն ու խաղաղությունը ամրապնդելու համար»⁶⁷:

Պատմաբան-միջազգայնագետ **Հակոբ Հակոբյանի** գնահատմամբ՝ քեմալաբոլշևիկյան գործակցությունը «մի հարվածով ոչնչի հավասարեցրեց նաև այն առավել կարևոր փաստաթուղթը, որն անմիջապես և ամբողջությամբ վերաբերում էր Հայ Դատին՝ Ռուսաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Դեկրետը «Թուրքահայաստանի մասին»»⁶⁸: Ավելին, անվերապահորեն զորավիգ լինելով Սևրի պայմանագիրը չեղարկելու քեմալականների ձգտմանը, Խորհրդային Ռուսաստանի

66 Տես նույն տեղում, էջ 402-403:

67 **Ավետիսյան Հ. Ա.**, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., «Բարձրագույն դպրոց», 1997, էջ 358:

68 **Հակոբյան Հ. Վ.**, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ատոլիկ», 2002, էջ 280:

կառավարությունը տարագիր հայերի առջև փակում էր հայրենիք վերադառնալու ուղիները, քանի որ «չքանում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն, այսինքն՝ Արևելյան Հայաստանի թուրքերի զավթած մասերը, որոնք ձանաչվում էին իբրև Թուրքիայի սեփականությունը»⁶⁹: Հ. Հակոբյանն իրավացիորեն նշում է, որ «վերադարձի իրավունքի փոխարեն 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը 12-րդ հոդվածով, իսկ Կարսինը՝ 13-րդ հոդվածով լրացնում էին հայերի բռնագաղթը»՝ շեշտելով, որ «...մինչև 1918 թվականը Ռուսաստանի կազմի մեջ մտնող այն տերիտորիաների բոլոր բնակիչները, որպիսիք սույն Պայմանագրի հիման վրա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական կառավարությունն այսօր ընդունում է որպես Թուրքիայի սուվերենության տակ գտնվող տերիտորիաներ, ունեն իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով Թուրքիայից ազատ հեռանալու իրավունք»⁷⁰: Այլ կերպ ասած՝ քեմալականների բռնագաղթած տարածքներում մնացած հատուկենտ հայերին առաջարկվում էր հեռանալ հայրենիքից՝ ոչինչ չստելով մինչ այդ բռնագաղթի ենթարկված հայության ձակատագրի և թողած ունեցվածքի մասին: Մինչդեռ Մոսկվայի պայմանագրի 13-րդ հոդվածը հավաստում էր, որ «Ռուսաստանը պարտավորվում է իր հաշվին հայրենիք վերադարձնել մինչև Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը Ռուսաստանում գտնվող բոլոր զինվորական և քաղաքացիական գերի թուրքերին»⁷¹: Իսկ Թուրքիան նույն պարտավորությունը ստանձնում էր «միայն դեռևս Թուրքիայում գտնվող ռուս զինվորական և քաղաքացիական գերիների վերաբերմամբ»⁷²: **Այսինքն՝ կողմերը փոխադարձ պարտավորություններով մի կողմից երաշխավորում էին էթնիկ թուրքերի ու էթնիկ ռուսների իրավունքների իրացումը, իսկ մյուս կողմից՝ մինչ այդ Արևելյան Հայաստանի՝ թուրքերի զավթած մասերում հայերի կոտորածների, հարկադիր տեղահանության ու բռնագաղթի, այսինքն՝ ցեղասպանության արդյունքների վավերացումը:**

Անդրադառնալով Կարսի պայմանագրից բխող տարածքային-սահմանային հարցերին՝ մերօրյա հետազոտողներ **Կարեն Խաչատրյանը, Համո Սուքիասյանը և Գեղամ Բաղայանը** Կարսի պայմանագրով խորհրդային կողմի միակ ձեռքբերում են համարում նախկին Երևանի գավառի հարավում գտնվող Արարատ-Քյոմուրլուդաղ-Արագդայան եռանկյունու շուրջ 260 կմ² տարածքի ներառումը ՀՍԽՀ սահմաններում, ինչի շնորհիվ Հայաստանին միացվեցին Արարատյան դաշտից Դարալագյազ (այժմ՝ Վայոց ձոր) տանող և ռազմավարական նշանակություն ունեցող ձանապարհը վերահսկող Քյարքի (այժմ՝ Տիգրանաշեն) և Զաֆարլու-Գյունույթ (Գետուտ) զույգ գյուղերը (Գ. Բաղայանի հաշվարկներով՝ 35-40 կմ² տարածք): Վերջիններս, սակայն, հետագա տարիներին աստիճանաբար «փոխանցվեցին» Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը, ինչը խախտում է անգամ Կարսի պայմանագրի դրույթները: **Ներկայումս, երբ Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանագծման ու սահմանազատման աշխատանքների իրականացման պատրվակով Ադրբեջանը փորձում է վերատիրանալ Քյարքիին և հետագայում ստեղծված**

69 Նույն տեղում, էջ 295:

70 Նույն տեղում, էջ 299:

71 Նույն տեղում, էջ 299-300:

72 Նույն տեղում, էջ 300:

մյուս անկլավներին, մեզ համար անհասկանալի է մնում այդ հարցում Հայաստանի լռությունը:

Կ. Խաչատրյանի, Հ. Սուքիասյանի և Գ. Բաղայանի կողմնակից աշխատության մեջ նշվում է Մոսկվայի պայմանագրի համեմատ Կարսի պայմանագրով արձանագրված՝ հայկական կողմի համար շահեկան մեկ այլ տարբերություն ևս. եթե Մոսկվայի պայմանագրի համաձայն՝ Նախիջևանի ինքնավար մարզի նկատմամբ խնամակալությունն Ադրբեջանն իրավունք չունի գիջելու «մի երրորդ պետության», ապա Մոսկվայի ջանքերով Կարսի պայմանագրից այդ պայմանը հանվեց⁷³: Նույն խնդիրը դիտարկելով հակառակ տեսանկյունից՝ ժամանակին Գ. Գալոյանը նկատել էր, որ, ըստ Մոսկվայի պայմանագրի, երկրամասը հանձնելով Ադրբեջանի խնամակալությանը պայմանով, որ վերջինս այդ խնամակալությունը չէր գիջելու մի երրորդ պետության, Խորհրդային Ռուսաստանը իրականում հասել էր Նախիջևանի նկատմամբ Թուրքիայի պետական իշխանության դադարեցմանը և դրա վերականգնման անհնարիությանը միջազգային իրավական տեսանկյունից⁷⁴: **Դրանով այդ ժամանակ կանխվել է Նախիջևանի միջոցով քենավական Թուրքիան և Խորհրդային Ադրբեջանը անմիջականորեն միմյանց հետ կապելու ծրագրի իրագործումը, ինչն անցանկալի էր Խորհրդային Ռուսաստանի համար:** 2020 թ. թուրք-ադրբեջանական համատեղ գործարարությունները Նախիջևանում, այդ երկրամասի վերածումը Հայաստանի Հանրապետության դեմ ռազմական գործողություններ սանձազերծելու հենակետի, Արցախի Հանրապետության տարածքի 75 %-ի բռնազավթումը եկան փաստելու, որ Թուրքիան ու Ադրբեջանը ինքնագլուխ «հաղթահարել են» Կարսում իրենց առջև դրված նախիջևանյան «արգելքը», և այժմ նրանց օրակարգում Մյունխի փորձաքննությունն է: **Նշենք նաև, որ թե՛ ռուս-թուրքական բանակցություններում և թե՛ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերում որևէ ձևակերպում չկա Ադրբեջանի կազմում Նախիջևանին ինքնավար հանրապետության կարգավիճակ տալու մասին: Երկրամասը լինելու էր ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալության ներքո:** Սակայն դա երկար չտևեց. 1924 թ. փետրվարի 9-ին կուսակցական որոշումների հիման վրա Նախիջևանը կազմավորվեց որպես ինքնավար հանրապետություն Ադրբեջանի կազմում⁷⁵: Միջազգային իրավունքի տեսանկյունից խնամակալությունը միակողմանի որոշմամբ չի կարող վերածվել սուվերենության:

Ակնհայտ է, որ մեր օրերում Նախիջևանի նկատմամբ հարաձուներ նկրտումներ ունի Թուրքիան, որը ձգտում է խլելու երկրամասը Ադրբեջանից և դարձնելու հենակետ իր համաթուրանական ու համիսլամական ծրագրերի իրականացման համար: Դրան հակազդելու համար ակտիվանում է նաև Իրանը, որը չի ձանաչում 1920-ական թթ. կնքված ռուս-թուրքական անօրինական համաձայնագրերը:

Շարունակելով Կարսի պայմանագրի հողվածներով Թուրքիայի ստանձնած պարտավորությունների խախտումների երկար շարանի բացահայտումը՝ ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանն** ուշադրություն է հրավիրում ռուսական կողմի առաջարկությամբ Կարսի պայմանագրի հավելվածում ներառված մի կետի վրա, ըստ որի՝ Թուրքիան

73 Տե՛ս **Խաչատրյան Կ. Հ., Սուքիասյան Հ. Կ., Բաղայան Գ. Մ.**, Խորհրդային Հայաստանի և ԼԴԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտությունների ակադեմիա, 2015, էջ 22-26:

74 Տե՛ս **Գալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 447:

75 Տե՛ս Документы внешней политики СССР / В 24-х томах / Глав. ред. А. А. Громыко, т. III (01 июля 1920-18 марта 1921), М., «Политиздат», 1959, док. N 342, էջ 598-599, т. IV (19 марта 1921-31 декабря 1921), М., 1960, док. N 264, էջ 42:

պարտավոր էր սահմանի երկայնքով ձգվող Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղագծի հարևանությամբ՝ 4-8 կմ հեռավորության վրա, պաշտպանական կառույցներ չհիմնել և մեծաքանակ գորքեր չպահել: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Թուրքիան ոչ միայն չկատարեց այդ պայմանը, այլև ինչպես սահմանամերձ, այնպես էլ բռնազավթված մնացյալ տարածքները դարձրեց հակահայ և հակառուս գործունեության հենակետ⁷⁶:

Հ. Հակոբյանի համոզմամբ՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիայի կողմից Արևելյան Հայաստանի հողերի բռնազավթման օրինականացումը հերքում է Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի արտաքին քաղաքականության վերաբերյալ նրա եվրոպացի կենսագիրների, մասնավորապես՝ լորդ Պատրիկ Բալֆուր Քինրոսի այն տեսակետը, ըստ որի՝ Մ. Քեմալի արտաքին քաղաքականությունը հիմնված էր ոչ թե արտաքին նվաճումների, այլ սահմանների կրճատման վրա: «Արևմտյան Հայաստանը մնաց բռնազավթված և հայաթափված, և Թուրքիայի նոր բռնակալը բռնազաղթի ենթարկված արևմտահայության վերադարձը Հայրենիք համարում էր իսպառ բացառված և այս գիծը Լոզանում նրա անունից հետևողականորեն առաջ տարավ Իսմեթ Ինենյուն: Ավելին, լորդ Քինրոսը խոստովանում է, որ Քեմալը դեմ էր հայոց պետականության ստեղծմանը»⁷⁷, - գրում է Հ. Հակոբյանը:

Հ. Հակոբյանի, Կ. Խաչատրյանի, Հ. Սուքիասյանի և Գ. Բաղայանի՝ Կարսի պայմանագրին տված գնահատականները հաստատում են՝ Կարսի պայմանագիրն իր էությամբ ու բովանդակությամբ, ինչպես նաև քաղաքական ու միջազգային իրավական նորմերի տեսանկյունից ինքնուրույն փաստաթուղթ չէ, քանի որ կրկնում և ամրագրում է Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը: Եվ քանի որ վերջինս իր հերթին ստորագրվել էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներով (պայմանագիրը ստորագրող կողմերն առանց որևէ լիազորության միջամտել են այն չստորագրած ինքնիշխան պետության (պետությունների) տարածքային ամբողջականության հարցերին), ուստի տարածքային սահմանազատման հարցում Կարսի պայմանագիրը Հայաստանի համար որևէ իրավական պարտավորություն չի առաջացնում⁷⁸:

2. Կարսի պայմանագրի պատմաիրավական գնահատականը

Վերջին տարիներին Հայաստանում հրատարակված պատմագիտական աշխատություններում հատկապես կարևորվում են Կարսի պայմանագրին վերաբերող այնպիսի գործնական հարցեր, ինչպիսիք են դրա վավերականությունը և անվավեր ճանաչումը: Հայաստանի անկախության վերականգնումից հետո այդ ուղղությամբ առաջին քայլը կատարել են հայր և որդի **Ստեփան և Կարո Պողոսյանները**: Նրանք բարձրացրել են Կարսի պայմանագիրն անվավեր ճանաչելու հարցը՝ առանձնացնելով երեք հանգամանք: **Նախ**՝ Հայաստանի ու Թուրքիայի միջև երկաթուղով, հեռագրով և այլ միջոցներով անընդհատ հաղորդակցություն, ինչպես նաև մարդկանց ու

76 Տե՛ս **Պանիկյան Է. Լ., Մելքոնյան Ա. Ա.**, Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., «Զանգակ-97», 2008, էջ 310:

77 **Հակոբյան Հ. Վ.**, նշվ. աշխ., էջ 304:

78 Տե՛ս **Հակոբյան Հ. Վ.**, նշվ. աշխ., էջ 302-303, **Խաչատրյան Կ. Հ., Սուքիասյան Հ. Կ., Բաղայան Գ. Մ.**, նշվ. աշխ., էջ 22-26, **Խաչատրյան Կ. Հ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007, էջ 144:

բեռների՝ առանց ձգձգման անխափան փոխադրում ապահովելու վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի 9-րդ և Կարսի պայմանագրի 13-րդ հոդվածները էապես խախտվել ու խախտվում են Թուրքիայի կողմից: **Այսուհետև՝** ԽՍՀՄ-ն այլևս գոյություն չունի, և Խորհրդային Հայաստանն էլ Կարսի պայմանագիրը ստորագրել է Մոսկվայի հարկադրանքով: Ըստ պատմաբանների՝ սրանք «հանգամանքների արմատական փոփոխություն» են, հետևաբար նաև հիմք՝ կիրառելու Վիեննայի կոնվենցիայի 62-րդ հոդվածը նախկինում կնքված պայմանագիրն առկախելու կամ ընդհատելու վերաբերյալ⁷⁹: Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը նշում են, որ այս դեպքում կիրառելի են նաև նույն կոնվենցիայի 51-րդ և 60-րդ հոդվածները, որոնց համաձայն՝ պայմանագիրն անվավեր է համարվում, եթե կնքվել է հարկադրաբար, կամ եթե պայմանավորվող կողմերից որևէ մեկը խուսափել է պայմանագրով սահմանված և էական նշանակություն ունեցող որոշ պարտավորություններ կատարելուց: Ըստ Ստ. Պողոսյանի և Կ. Պողոսյանի՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի խախտում է Թուրքիայի ու Ադրբեջանի միջև 1994 թ. կնքված բարեկամության և համագործակցության ուխտը⁸⁰: Մինչև ժամանակ միջազգային իրավական նման ծանրակշիռ հիմքերի առկայության պայմաններում անգամ սրանք գործնականորեն անհնար են համարում Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը չեղյալ հայտարարելը, դադարեցնելը կամ վերանայելը: «Այն, որ Հայաստանը հարկադրված է եղել պայմանագիրը ստորագրել, նույնիսկ ձևական առումով անհնար է ապացուցել, որովհետև Կարսում Հայաստանի պատվիրակությունը, բացի Անին Հայաստանին տալուց, ուրիշ որևէ էական առաջարկությամբ հանդես չի եկել: ...Ինչ վերաբերում է խնդրի ոչ թե իրավական, այլ գործնական կողմին, ապա չեղյալ հայտարարելն առավել ևս իրագործելի չէ այն պարզ պատճառով, որ մեր օրերում Թուրքիան հզոր է, իսկ Հայաստանը՝ թույլ, և ինքնախաբեություն է հույսը ՄԱԿ-ի կամ ԵԱՀԽ-ի վրա դնելը:

Հարցի բարձրացումը չի նպաստելու նաև հայ-թուրքական երկխոսություն սկսելուն, որովհետև անկախ մեր կամքից այն ոչ միայն չի օգնելու, այլ խանգարելու է երկխոսության համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը»⁸¹, - նկատում են պատմաբանները:

Երկու հեղինակներ՝ **Արմեն Մարությանը** և **Արա Պապյանը**, Մոսկվայի և Կարսի պայմանագրերն ուսումնասիրել ու գնահատել են պատմաիրավական տեսանկյունից՝ հանգելով ուշագրավ եզրակացությունների: Մասնավորապես Ա. Մարությանը հիմնավորում է, որ, Թուրքիայի տարածք ձանաչելով Կարսը, Արդահանը և Մուրնալուն, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, հակառակ այդ պահին միջազգային իրավունքի անբաժան մաս կազմող՝ պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով ուժի կիրառումը բացառելու, ինչպես նաև հակառակ թե՛ իր հռչակած ազգերի ինքնորոշման, թե՛ պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը չխախտելու վերաբերյալ նորմերի և սկզբունքների, ձանաչել ու վավերացրել է 1920 թ. Հայաստանի դեմ քեմալական Թուրքիայի նվաճողական պատերազմի արդյունքները՝ թուրքական զավթումները: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է պաշտպանել

79 Տե՛ս **Պողոսյան Ստ. Կ., Պողոսյան Կ. Ստ.**, Հայկական հարցի և հայրց ցեղասպանության պատմություն, հատ. III (Հայկական հարցը 1920-1922 թվերին), գիրք II, Եր., «Հայաստան», 2003, էջ 448:

80 Տե՛ս նույն տեղում, էջ 447-449:

81 Նույն տեղում, էջ 449:

իր և ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքներն այն հնարավորություներով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը: Մանավանդ որ մեր հարևան պետությունները վաղուց այդ իրավունքը խեղաթյուրված ձևով օգտագործում են մեր դեմ⁸²:

Անդրադառնալով խնդրո առարկա պայմանագրերը ստորագրած կողմերի իրավական կարգավիճակին՝ Ա. Պապյանն էլ նշում է, որ 1921 թ. Մոսկվայի պայմանագրի կնքման պահին ՌՍԴԽՀ-ն միջազգայնորեն ճանաչված չէր աշխարհի որևէ պետության՝ օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից (առաջինը Մեծ Բրիտանիան է, որ 1924 թ. փետրվարի 1-ին ճանաչել է ՌՍՖՍՀ իրավահաջորդ ԽՍՀՄ-ը): Ճանաչված չէր նաև Թուրքիայի քենալական կառավարությունը: Բացի այն, որ վերջինս միջազգային պայմանագրերը կնքում էր ոչ թե իր, այլ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) անունից՝ իրեն վերագրելով անօրինական իրավասություն, կառավարության ղեկավար Մ. Քեմալն էլ երկրի օրինական իշխանության՝ սուլթան-խալիֆի դեմ ապստամբած և Մուդրոսի զինադադարը ոտնահարող, փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր, որը կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի 1920 թ. ապրիլի 11-ի հրամանով մահվան էր դատապարտվել⁸³: Ա. Պապյանի գնահատմամբ՝ միջազգային իրավունքի խախտում է նաև Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը, քանի որ վերջինս չի մասնակցել դրա ստորագրմանը: Հետևաբար Մոսկվայի պայմանագիրը, ըստ միջազգային իրավունքի, որևէ պարտավորություն կամ իրավունք չի ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար՝ առանց նրա համաձայնության: Որպես այդպիսին՝ այն անօրինական է ու անվավեր⁸⁴: Ըստ Ա. Պապյանի՝ միջազգային իրավունքի հենց այդ նորմը շրջանցելու նպատակով Մոսկվայի պայմանագրում նախատեսվեց 15-րդ հոդվածը, որի հիման վրա էլ նախապատրաստվեց ու ստորագրվեց Կարսի պայմանագիրը: Իրականում, սակայն, այդ իրողությունը ևս միայն ընդգծում է Կարսի պայմանագրի անօրինական ու անվավեր լինելը, քանի որ պայմանադիր պետություններից Խորհրդային Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր և այդպիսին չեղավ իր գոյության 70 տարիների ընթացքում: Խորհրդային Հայաստանի անունից Կարսի պայմանագիրը ստորագրած Հայաստանի հեղափոխական կոմիտեն (Հայիեղկոմ, ՀՀԿ) «ակնհայտորեն օտարերկրյա, այն էլ անօրինական վարչախմբի դրածո վարչախումբ էր», որի իշխանությունը խարսխված էր «երկիրը բռնազավթած օտարերկրյա բանակի քաղաքական ղեկավարության կամքի վրա և իրականացվում էր պարտադրանքի տակ»⁸⁵:

Ա. Պապյանի և Ա. Մարուքյանի եզրահանգումները բացահայտում են Կարսի պայմանագրի իրավական էությունը, ուստի ակնհայտ է դառնում, որ պայմանագրից բխող բազմաթիվ քաղաքական և հատկապես իրավական հարցերի վերաբժարմանն ու վերաբժևորմանը պարտավոր էինք պատրաստ լինել նախքան Թուրքիայի

82 Տե՛ս **Մարուքյան Ա. Ց.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., Պատմության ինստիտուտ, 2014, էջ 124-125, 127-128, 137:

83 Տե՛ս **Պապյան Ա. Ա.**, Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, «Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (Հոդվածների ժողովածու)», Եր., «Ասողիկ», 2012, էջ 25-26:

84 Տե՛ս **Պապյան Ա. Ա.**, Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921) փորձաքննությունը՝ ըստ միջազգային իրավունքի, «Հայրենատիրություն...», էջ 39:

85 **Պապյան Ա. Ա.**, Կարսի պայմանագիրն ու Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության իրավական կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի, «Հայրենատիրություն...», էջ 74-75:

հետ հարաբերությունների կարգավորման գործընթաց սկսելը՝ հաշվի առնելով Թուրքիայի դիրքորոշումը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցի վերաբերյալ:

Հարկ է անդրադառնալ նաև Կարսի պայմանագրի վերաբերյալ հետազոտողների տեսակետներում նկատված մի քանի տարբերությունների: Դրանցից առաջինը վերաբերում է Կարսի պայմանագրի վավերացման հարցին: Ա. Պապյանը շեշտում է, որ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի սովետական սոցիալիստական հանրապետությունները՝ որպես Կարսի պայմանագրի կողմ, չեն վավերացրել այն: Ի պատասխան 1922 թ. մարտի 16-ին՝ Մոսկվայի պայմանագրի առաջին տարելիցի օրը, Կարսի պայմանագրի՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի և Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից վավերացման և սեպտեմբերի 11-ին Երևանում պայմանագրի վավերաթղթերի փոխանակման վերաբերյալ որոշ ուսումնասիրողների արտահայտած տեսակետին՝ նա նշում է, որ Կարսի պայմանագրի, այսպես կոչված, վավերացման պահին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ՍՍՀ-ները դադարել էին գոյություն ունենալուց, քանի որ դրանից 4 օր առաջ՝ մարտի 12-ին, ձևավորել էին վարչաքաղաքական նոր միավոր՝ Անդրկովկասի ՍՍՀ-ների Ֆեդերատիվ Միությունը՝ Անդրֆեդերացիան, որը Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության հետ հարաբերություններ էր հաստատել միութենական պայմանագրի հիման վրա: «Հստ այդ, այս վավերացումը երբեք չի կարող դիտարկվել օրինական, հետևաբար իրավական հետևանք ստեղծող, քանի որ ռուսաստանյան այդ կառույցը ոչ ներքին, ոչ միջազգային օրենքի տեսանկյունից նման լիազորություն չուներ և չէր կարող ունենալ: Չի կարող մի երկրի կառույց վավերացնել մեկ այլ երկրի կամ երկրների ստորագրած պայմանագիրը»⁸⁶, - շեշտում է հետազոտողը՝ հավելելով, որ խորհրդային ռազմակալումից մինչև ԽՍՀՄ կազմավորումը Հարավային Կովկասի երկրները գոնե ձևականորեն անկախ էին: Այդ տեսակետը հաստատում է Արարատ Հակոբյանը՝ շեշտելով, որ 1921 թ. մարտին Հայաստանն անկախ էր⁸⁷: Ավելին՝ Ա. Հակոբյանը, զարգացնելով պատմաբան Էդիկ Զոհրաբյանի տեսակետը, նշում է, որ խորհրդային կողմը մտադիր էր Կարսի պայմանագիրը վավերացնել Անդրֆեդերացիայի խորհրդի նիստում, սակայն թուրքական կողմի պնդմամբ որոշվեց, որ պայմանադիր հանրապետություններն առանձին-առանձին վավերացնեն այն: Թուրքերին առավելապես հետաքրքրում էր պայմանագրի վավերացումը Հայաստանի կողմից՝ այն հաշվով, որ Լոզանի միջազգային խորհրդաժողովում Հայկական հարցի քննարկման ժամանակ թուրքական պատվիրակությունը կարողանար հղում անել Հայաստանի կողմից վավերացված Կարսի պայմանագրին: Թուրքիայի այս ցանկություն-պահանջը ևս կատարվեց. անդրկովկասյան հանրապետություններն առանձին-առանձին վավերացրին Կարսի պայմանագիրը⁸⁸: Հղում անելով արխիվային վավերագրերին՝ Ա. Հակոբյանը փաստում է՝ 1922 թ. մարտի 20-ին ՀՍԽՀ Կենտգործկոմն իր արտահերթ նստաշրջանում միաձայն որոշեց «ընդունել, հաստատել և վավերացնել սույն պայմա-

86 Պապյան Ա. Ա., Կարսի պայմանագրի (չ)վավերացման և հարակից հարցերի շուրջ, «Հայրենասիրություն...», էջ 282:

87 Տե՛ս Հակոբյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 211-213:

88 Տե՛ս նույն տեղում, էջ 313, Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922 թթ.), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 301-302:

նագիրն իր ամբողջ բովանդակությամբ»⁸⁹: Այս իրողությունը հերքում է Կարսի պայմանագրի վավերացումը խնդրահարույց համարելու Ա. Պապյանի տեսակետը, բայց հաստատում է վավերացման ժամկետի վերաբերյալ առարկությունը: **Իսկապես, մարտի 12-ին ձևավորվել էր վարչաքաղաքական նոր միավոր՝ Անդրֆեդերացիան, ուստի 1922 թ. մարտի 20-ին ՀՄԽՀ Կենտրոնական արտահերթ նստաշրջանի որոշումն ուշացած քայլ էր:**

Կարսի պայմանագրի պատմաիրավական գնահատման համատեքստում հայեցակարգային նշանակություն ունի Հայաստանի երկրորդ և երրորդ հանրապետությունների միջև իրավական կապի հարցը, որի վերաբերյալ ևս կա տարակարծություն: Այսպես, ի տարբերություն Ա. Մարությանի⁹⁰, Ա. Պապյանը պնդում է, որ Հայաստանի երրորդ հանրապետությունը չի կարող լինել ՀՄԽՀ իրավահաջորդը, քանի որ վերջինս չի եղել ինքնիշխան պետություն: Հետևաբար ՀՀ-ն չի կարող լինել ՀՄԽՀ իրավահաջորդը նաև պայմանագրերի, մասնավորապես՝ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի հարցում: Նրա համոզմամբ՝ ներկայիս ՀՀ-ն Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդն է, որի հողային իրավունքները խարսխված են Վ. Վիլսոնի իրավաբար վճռի վրա⁹¹:

Անդրադառնալով 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման և վավերացման փուլերում պաշտոնական Անկարայի կողմից հնչեցված ու Հայաստանի անվտանգության և հայոց արդար պահանջատիրության դեմ ուղղված նախապայմաններին, մասնավորապես՝ այն պնդմանը, թե կողմերը պետք է ձանաչեն միմյանց միջև գոյություն ունեցող սահմանը, Ա. Մելքոնյանը նշում է, որ դրանով իսկ «թուրքերն իրենք փաստում են, որ Հայաստանի ու Թուրքիայի միջև գոյություն ունի միայն փաստական, այլ ոչ թե իրավականորեն ձանաչված սահման: Այսինքն՝ այն de jure սահման չէ, քանի որ Կարսի պայմանագիրն անօրինական փաստաթուղթ է, իրավական ուժ չունի և կնքվել է 1921 թ. միջազգային հանրության կողմից չձանաչված երկու կողմերի՝ Խորհրդային Հայաստանի և քենալական Թուրքիայի միջև»⁹²: «...Մեզ ցեղասպանել են հայրենիքից զրկելու համար... Եվ թուրքերը հասել են իրենց նպատակին՝ մեզ ցեղասպանելով, տեր են դարձել մեր հայրենիքին: Նշանակում է՝ այս արձանագրություններով նրանք ուզում են մեր հայրենագրկմանը տալ իրավական ձևակերպում՝ սահմանը դե յուրե ձանաչել տալով»⁹³, - շեշտում է պատմաբանը՝ հենց այդ հանգամանքով բացատրելով ներկայիս Թուրքիայի ջանադրությունը՝ հասնելու 1992 թ. մարտի 2-ից ՄԱԿ-ի անդամ, այսինքն՝ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության կողմից այդ սահմանի ձանաչմանը, դրա վերածմանը «de facto»-ից «de jure»-ի⁹⁴:

89 Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 3, գ. 19, մաս 2, թ. 464, ֆ. 1440, ց. 1, գ. 34, թ. 10, **Հակոբյան Ա. Մ.**, նշվ. աշխ., էջ 313:

90 Տես **Մարության Ա. Ց.**, նշվ. աշխ., էջ 42-46:

91 Տես **Պապյան Ա. Ա.**, Պետությունների և պայմանագրերի նկատմամբ իրավահաջորդության հարցը, «Հայրենասիրություն...», էջ 262-269, **Ույնի** Հայաստանի հանրապետությունների իրավահաջորդության հարցը միջազգային իրավունքի տեսանկյունից, «Հայրենասիրություն...», էջ 442-445:

92 **Մելքոնյան Ա. Ա.**, ՀՀ Ազգային ժողովում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ելույթը հայ-թուրքական արձանագրությունների կապակցությամբ (2009 թ. հոկտեմբերի 1), «Ցեղասպանություն և հայրենագրկում: Ծանաչումից հատուցում (հողվածներ և հարցազրույցներ)», Եր., «Զանգակ» հրատ., 2015, էջ 274-275:

93 Նույն տեղում, էջ 276:

94 Տես նույն տեղում, էջ 275:

Ա. Մելքոնյանի, Ա. Մարուքյանի և Ա. Պապյանի աշխատանքներում հիմնավորվում է, որ Ախուրյան ու Արաքս գետերով անցնող խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը լոկ բաժանարար գիծ է: Այն չունի հայ-թուրքական պետական սահմանի կարգավիճակ, քանի որ չկա դրա վերաբերյալ օրինականորեն ուժի մեջ մտած և գործող միջազգային որևէ պայմանագիր: Շեշտվում է, որ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև գոյություն ունեցող միակ «de jure» սահմանը վիլսոնյանն է, իսկ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի անօրինական պայմանագրերը չեն կարող օրինական սահմանի հիմք լինել: Հետագոտողները նկատում են, որ եթե ռուս-թուրքական նոր մերձեցման դեպքում նախկին ԽՍՀՄ սահմանի հայաստանյան հատվածը «հաստատվի» որպես հայ-թուրքական սահման, ապա իրավական տեսանկյունից դա կնշանակի սահմանի փոփոխություն, քանի որ դեռևս 1920 թ. Վ. Վիլսոնի կողմից գծված Հայաստանի և Թուրքիայի «de jure» սահմանն էլ-պես տարբերվում է խորհրդա-թուրքական սահմանից⁹⁵:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Հայաստանի անկախության երեսուն տարիների ընթացքում հայրենի պատմագիտությունը գնահատելի աշխատանք է կատարել հայոց պահանջատիրության տեսանկյունից Կարսի պայմանագրի պատմաիրավական հիմքերը վեր հանելու, դրա բովանդակությունը վերլուծելու, պայմանագրից բխող իրավական հետևանքների վտանգավորությունը գնահատելու, փաստաթղթի անվավերության հարցը դիվանագիտական քննարկումների օրակարգ ներառելու անհրաժեշտությունը և պայմանները հստակեցնելու ուղղությամբ:

Կարսի պայմանագրին առնչվող վերոնշյալ հարցերն ունեն ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն, քանի որ ներկայումս ռուս-թուրքական հարաբերությունները շարունակվում են քեմալա-բոլշևիկյան ոգով՝ Հայաստանը պահելով միջազգային-իրավական շղթայում միմյանց տրամաբանորեն կապված 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի կապանքներում: Ու թեև առկա են այս պայմանագրերից յուրաքանչյուրի անվավեր ճանաչման բոլոր հիմքերը, այնուամենայնիվ, դրանց իրավական հետևանքները գործնականորեն ազդել և ազդում են ՀՀ տարածքային-սահմանային հարցերի լուծման վրա՝ կաշկանդելով նրան հայ ժողովրդի արդար պահանջատիրության բավարարմանը հետամուտ լինելու հարցում:

Ուշագրավ է, որ թուրքական կառավարությունը թե՛ ցյուրիկյան արձանագրությունների նախապատրաստման ընթացքում և թե՛ արցախյան 44-օրյա պատերազմից հետո ամենատարբեր ատյաններից ՀՀ-ին ուղղված իր նախապայմաններում հղում չի

95 Տե՛ս Պապյան Ա. Ա., Կրկին Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջակված և Կարսի պայմանագրի հետևանքների հնարավոր ճանաչման մասին, «Հայրենատիրություն...», էջ 119-120, **Մույնի՛** Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և «ընդհանուր սահմանը որոշող համապատասխան պայմանագրերի» մասին, «Հայրենատիրություն...», էջ 143, **Մույնի՛** Հայաստանն ու Թուրքիան իրավասու չեն «հաստատելու» սահմանը, «Հայրենատիրություն...», էջ 177, **Մույնի՛** Հայոց պետականության գաղափարական հիմքը, «Հայրենատիրություն...», էջ 157, **Մույնի՛** Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին, «Հայրենատիրություն...», էջ 83-86, **Մելքոնյան Ա. Ա.**, «Հ Ազգային ժողովում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Վլոդ Մելքոնյանի ելույթը հայ-թուրքական արձանագրությունների կապակցությամբ (2009 թ. հոկտեմբերի 1)», էջ 277-278, **Марукян А. П.**, Историко-правовой анализ советско-турецкого московского договора 1921 года «О дружбе и братстве», «Историко-филологический журнал», Ер., НАН РА, 2021, N 1, էջ 12, 15:

կատարել Կարսի պայմանագրին, սակայն նրա քաղաքականությունն ամբողջությամբ ուղղված է հենց այդ պայմանագրի վերահաստատմանը: Մասնավորապես, այդ է վկայում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության տարածքային ամբողջականության երկկողմ ճանաչման առումով ՀՀ-ի առջև դրված թուրքական նախապայմանը: Հենց միայն այս իրողությունը բավարար է՝ փաստելու Կարսի պայմանագրի իրավական խոցելիությունը, քանի որ վերջինիս՝ լիարժեք իրավական ուժ ունենալու պարագայում Թուրքիան բնավ կարիք չէր ունենա ՀՀ-ի հետ նոր պայմանագրով փոխադարձորեն ճանաչելի դարձնելու իր տարածքային ամբողջականությունն ու հայ-թուրքական փաստացի գոյություն ունեցող պետական սահմանագիծը:

Հետստորդպատերազմյան ժամանակաշրջանում ձևավորվող նոր աշխարհակարգում Թուրքիան հավակնում է դառնալու համաշխարհային դերակատարություն ունեցող ուժային կենտրոն՝ հետևողականորեն առաջ տանելով դեռևս 19-րդ դարի վերջին քառորդին որդեգրած համաթուրանականության գաղափարախոսությունը: Այն մեր օրերում դրսևորվում է նեոթուրքականության ու նեոիսլամականության տեսքով, որոնցում անփոփոխ է Հայաստանն իբրև վարչաքաղաքական միավոր և աշխարհագրական հասկացություն վերացնելու նպատակը: Որպես դրան հասնելու միջանկյալ ուղի գործնականորեն դիտարկվում է Հայաստանը Թուրքիայից կախման մեջ գտնվող վասալ պետության վերածելու տարբերակը, որի իրագործմանը վերջինս հասել էր 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով: 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը վերանայելու նպատակով նույն թվականի մարտ-հունիսին տեղի ունեցած Տրապիզոնի, ապա Բաթումի հաշտության բանակցությունների պատմական դասը հուշում է, որ դիվանագիտական հարթությունում Մոսկվայի և Կարսի պայմանագրերը վերանայելու դեպքում Թուրքիան ձգտելու է առնվազն կյանքի կոչելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը, իսկ խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու հնարավորության դեպքում՝ ՀՀ-ից նվաճելու նոր տարածք: Թուրքիայի հավակնությունները նկատի ունենալով՝ Ա. Հակոբյանը, Ա. Պապյանը և Ա. Մարուքյանը կարևորում են նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի անօրինական և անվավեր լինելը բարձրաձայնելը⁹⁶, իսկ Ա. Մելքոնյանը, հիշեցնելով Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի բացատրությունները թուրքական խորհրդարանում այն մասին, թե իբր հայ-թուրքական արձանագրություններով Հայաստանը վերջապես հրաժարվում է Սևրի պայմանագրից ու ճանաչում Կարսի պայմանագիրը, նկատում է՝ թուրք պաշտոնյայի հայտարարությունները «ինչ-որ իմաստով ձյնարտություն են պարունակում»։ դրանք վկայում են՝ «Թուրքիան իրապես վախենում է Սևրի դաշնագրից»⁹⁷: Ա. Մելքոնյանի հեռատես նկատառումը հանգում է նրան, որ միջազգային հարաբերությունների արդի համակարգում ազդեցիկ պետությունները կարող են կրկին օգտագործել սևրյան հաղթաթուղթը որպես Թուրքիայի նկատմամբ նոր ճնշումների գործիք: ՀՀ-ն պետք է պատրաստ լինի նման սցենարի և կարողանա արտաքին նպաստավոր հանգամանքներն օգտագործել ի շահ հայ ժո-

96 Տե՛ս **Հակոբյան Ա. Մ.**, նշվ. աշխ., էջ 66, 96-97, **Պապյան Ա. Ա.**, Փոքր, բայց կարևոր ճշտում կամ ե՞րբ է ստորագրվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, «Հայրենասիրություն...», էջ 368, **Մարուքյան Ա. Ց.**, նշվ. աշխ., էջ 121:

97 Տե՛ս **Մելքոնյան Ա. Ա.**, Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., «Գիտություն», 2013, էջ 486-487, **Մույնի** Աշոտ Մելքոնյան. Արձանագրություններում առկա է մի կետ, որը խաչ է թաշում Սևրի դաշնագրի վրա, «Տեղապահություն և հայրենագրվում: Ճանաչումից հատուցում (հողվածներ և հարցազրույցներ)», էջ 286-287:

ղովըրդից խվված հայրենի տարածքների նկատմամբ նրա օրինական իրավունքների վերականգնման⁹⁸:

Ա. Պապյանի համոզմամբ ևս՝ հայոց արդար պահանջատիրության բավարարման միակ ուղին Հայկական հարցի լուծումը տեսական քննարկումներից իրավական դաշտ տեղափոխելն է և հայ-թուրքական հարաբերություններում առկա բոլոր խնդիրներին իրավական լուծում տալը⁹⁹: Ընդ որում, ըստ նրա, Հայկական հարցի լուծումը ենթադրում է ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչում Թուրքիայի կողմից, այլև միջազգային իրավունքով ՀՀ-ին «հատկացված կամ վերապահված տարածքային, նյութական և բարոյական իրավունքների վերականգնում»: Ա. Պապյանը դա համարում է իրագործելի այն առումով, որ 1991-1992 թթ. Եվրամիության անդամ պետությունների կողմից նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների անկախության ճանաչումը բնավ չի նշանակում, թե դրանով ճանաչվել է նաև այդ հանրապետությունների սահմանների անձեռնմխելիությունը: Դրա պատճառն այն է, որ Խորհրդային Միության արտաքին և նրա հանրապետությունների միջև սահմանները մի շարք դեպքերում ձևավորվել են «ուժի կամ ուժի սպառնալիքի» կիրառմամբ: Դրա հետևանք է նախկին խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը, որն անցնում է Ախուրյան և Արաքս գետերով:

Հարկ է հաշվի առնել, որ Կարսի պայմանագրի ոչ թե անվավեր ճանաչմանը, այլ վերանայմանը ձգտում է նախ և առաջ Թուրքիան՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությանը և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի իրագործման հնարավորություններն ի չիք դարձնելու, Հայաստանից նոր տարածքներ նվաճելու նպատակով ու հեռանկարով: Ընդ որում, Թուրքիայի հավակնությունները ներկայացնում են աշխարհաքաղաքական «մեծ խաղի» մի դրվագը: Մեր տարածաշրջանն աստիճանաբար ներքաշվում է ռազմաքաղաքական անկանխատեսելի գարգացումների հորձանուտ, որում վտանգված են հայկական պետականության գոյությունն ու հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը: Այս իմաստով թուրք-ադրբեջանա-վրաց-ռուս-իրանական աքցանում հայտնված հայկական կողմը կանգնած է նշված պետությունների հետ բանակցային նոր ռազմավարություն որդեգրելու հրամայականի առջև՝ առաջնային խնդիր ունենալով Կարսի պայմանագրի կրկնությունից խուսափելը: Իրավական հարթությունում ՀՀ ու ԱՀ սահմաններին, տարածքային ամբողջականությանը և կարգավիճակին վերաբերող հարցերի ուղղակի ու միջնորդավորված քննարկումներում հայկական կողմը պետք է կարողանա զերծ մնալ ավելորդ շտապողականությունից, ունակ լինի հանդես գալու հայոց պահանջատիրության դիրքերից, պաշտպանելու ՀՀ և ԱՀ պետական շահերը: Իսկ դա հնարավոր է միայն արցախյան 44-օրյա պատերազմից հետո խարխված ՀՀ սուբյեկտայնության պահպանման, տնտեսական և ռազմական պոտենցիալի վերականգնման, ՀՀ-ԱՀ-Սփյուռք միասնության և համակողմանի համագործակցության դեպքում:

98 Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու), Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2011, էջ 386-394, 412-419, 451-452:

99 Տե՛ս Պապյան Ա. Ա., Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները, էջ 21:

Լիլիթ Հր. Հովհաննիսյան – ՀՀ ԳԱԱ ՊԻ ավագ գիտաշխատող, ԳԱԱ ԳԿՄԿ և ԵՊՀ դասախոս, գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցերը: Հեղինակ է 2 մենագրության, 5 գիտամեթոդական աշխատության, ավելի քան 40 գիտական հոդվածների:

Էլ. հասցեներ՝ lilithovannisian@yahoo.com; lilit.hovhannisyan@isec.am;
l_hovhannisyan@ysu.am

Summary

THE EVALUATION OF THE KARS TREATY OCTOBER 13, 1921,

According to modern historical science of the Republic of Armenia
(1991-2021)

Lilit Hr. Hovhannisyan

Candidate of Sciences in History

Key words – Republic of Armenia, Turkey, Moscow treaty, Kars treaty, Armenian question, state succession, W. Wilson’s Arbitral Award, Armenian claims under international law, Western Armenia, Kars, Ardahan, Surmalu, Nakhijevan (Nakhichevan).

The history of the treaties of Alexandropol on December 2, 1920, Moscow on March 16, and Kars on October 13, 1921, logically related to each other, is the most disputable and the most difficult in terms of evaluation in the series of the international diplomatic documents on the Armenian question.

Nevertheless, the most discussed of the above three treaties in Armenian historiography is the Treaty of Moscow, and the most underestimated – the Treaty of Kars, although the Armenian-Turkish relations have been regulated by this treaty since October 13, 1921. The military-political conditions and goals of signing the Kars Treaty are examined in scientific works of G. Galoyan, H. Avetisyan, A. Melkonyan, A. Hakobyan, H. Hakobyan and in joint study of K. Khachatryan, H. Sukiasyan and G. Badalyan. They emphasize that the Kars Treaty is not an independent document not only in its essence and content, but also from the point of view of political and international legal norms because of repetition and fixation of Moscow Treaty in it. Therefore, since the latter in its turn was signed in violation [the signatories of the treaty without any authority had interfered in the territorial integrity of the non-signatory sovereign state (states)] of the basic principles of international law, so the Kars Treaty does not create any legal obligation for Armenia in the issue of territorial demarcation.

Historians St. and K. Poghosyans, A. Melkonyan, A. Marukyan and A. Papyan analysed the Kars Treaty from the historical-legal point of view. According to them, the Armenian part of the Soviet-Turkish border passing through the Akhuryan and Araks rivers is just a dividing line. It does not have the status of an Armenian-Turkish state border, as there is no any international treaty on it having legal force. The historians emphasize that the only de jure border between the Republic of Armenia and the Republic of Turkey is the Wilsonian border, and the illegal treaties of Alexandropol, Moscow and Kars cannot be the basis of a legal border. They also note that in case of a new Russian-Turkish rapprochement, the «confirmation» of the former USSR border's Armenian part as an Armenian-Turkish border will mean from a legal point of view a change of the border because the de jure border between Armenia and Turkey drawn by W. Wilson still in 1920 differs significantly from the Soviet-Turkish border.

The above-mentioned issues have not only scientific but also political significance, as at present Russian-Turkish relations continue in the Kemal-Bolshevik spirit, keeping Armenia in the shackles of Alexandropol, Moscow and Kars treaties.

After the joint aggression of Turkish-Azerbaijani armies and international terrorist groups against the Artsakh Republic in 2020, the Armenian side, appeared in the Turkish-Azerbaijani-Georgian-Russian «tongs», is facing the imperative of adopting a new negotiation strategy with the mentioned states having as a primary task the avoidance of repetition of the Kars Treaty. The Armenian diplomacy must be able to refrain from excessive haste, to act from the position of the Armenian claims under international law, also defend the Armenian state interests in direct and mediated discussions in the legal field on issues related to the borders, territorial integrity and status of the Republic of Armenia and Republic of Artsakh. And this is possible only in the case of restoration of the international personality and economic-military potential of the Republic of Armenia got loose by the Artsakh 44-days war, also the unity and comprehensive cooperation between the Republic of Armenia, Republic of Artsakh and Armenian Diaspora Javakhk.

КАРСКИЙ ДОГОВОР ОТ 13 ОКТЯБРЯ 1921 Г.

В оценке современной армянской исторической науки
(1991-2021 гг.)

Лилит Гр. Оганисян

Кандидат ист. наук

Ключевые слова – Республика Армения, Турция, Московский договор, Карсский договор, Армянский вопрос, правопреемство государств, Арбитражное решение В. Вильсона, Армянские требования по международному праву, Западная Армения, Карс, Ардаган, Сурмалу, Нахичеван.

В ряде международных дипломатических документов новейшего времени, касающихся Армянского вопроса, самым спорным и сложным, в смысле оценки, является история логически связанных друг с другом Александропольского, Московского и Карсского договоров от 2 декабря 1920 г., 16 марта и 13 октября 1921 г. соответственно.

Однако самым обсуждаемым в армянской историографии из вышеупомянутых трех договоров является Московский договор, а самым недооцененным – Карсский, несмотря на то, что с 13 октября 1921 г. армяно-турецкие отношения регулируются на основании именно этого договора. Военно-политические условия и цели заключения Карсского договора рассмотрены в научных трудах Г. Галояна, Г. Аветисяна, А. Мелконяна, Ар. Акопяна и Ак. Акопяна и в совместном исследовании К. Хачатряна, А. Сукиасяна и Г. Бадаляна. Ученые подчеркивают, что Карсский договор по сути и содержанию, и также с точки зрения политических и международно-правовых норм, не является самостоятельным документом, поскольку повторяет и закрепляет Московский договор. В связи с тем, что этот договор тоже был подписан с нарушением фундаментальных международно-правовых норм [стороны, подписавшие договор, без каких-либо полномочий вмешались в вопросы территориальной целостности государства (государств), не подписавших его], следовательно, по Карсскому договору, Армения не несет каких-либо правовых обязательств в вопросе территориального разграничения.

Историки Ст. Погосян, К. Погосян, А. Мелконян, А. Марукян и А. Папян проанализировали Карсский договор с историко-правовой точки зрения. Согласно их исследованиям, армянский участок советско-турецкой границы, проходящий вдоль рек Ахурян и Аракс, является лишь разделительной линией, не имеющей юридического статуса армяно-турецкой государственной границы, поскольку не существует какого-либо имеющего силу международного договора, подтверждающего это. Подчеркивается, что единственной границей *de jure* между Республикой Армения и Турецкой

Республикой является вильсонская граница, а незаконные договоры Александрополя, Москвы и Карса не могут быть основой для установления законной границы. Исследователи отмечают, что если в случае нового российско-турецкого сближения, армянский участок границы бывшего СССР будет «установлен» как армяно-турецкая граница, то с правовой точки зрения это будет означать изменение границы, поскольку определенная В. Вильсоном еще в 1920 г. граница de jure между Арменией и Турцией существенно отличается от существующей советско-турецкой границы.

Вышеуказанные вопросы имеют не только научное, но и политическое значение, поскольку в настоящее время российско-турецкие отношения продолжают в кемалистско-большевистском духе, удерживая Армению в «оковах» Александропольского, Московского и Карсского договоров. После совместной агрессии турецко-азербайджанской армии и международных террористических групп против Республики Арцах в 2020 г. армянская сторона, оказавшаяся в турецко-азербайджано-грузино-российско-иранских клещах, столкнулась с потребностью принять новую стратегию переговоров, имея своей первичной задачей не допустить повторения Карсского договора. В правовой сфере, при прямых и опосредованных обсуждениях вопросов, касающихся границ, территориальной целостности и статуса Республики Армения и Республики Арцах, армянская дипломатия должна научиться воздерживаться от излишней поспешности, действовать с позиций требований Армении в соответствии с нормами международного права, а также защищать свои государственные интересы. А это возможно только в случае восстановления расшатанных вследствие 44-дневной Арцахской войны международной правосубъектности, экономического и военного потенциала Республики Армения, а также объединения Республики Армения, Республики Арцах и Диаспоры и их и всестороннего сотрудничества.

REFERENCES

1. **Akopjan A. M.**, Moskovskij I Karsskij dogovory v sud'be armjanskogo naroda, Jer., "Gitutjun", 2021 (**In Russian**).
2. **Avetisyan H. A.**, Haykakan harts'ë 1918 t'vakandin, Yer., "Bardzraguyn dprots'", 1997 (**In Armenian**).
3. **Danielyan È. L., Melk'onyan A. A.**, Hayots' patmut'yun: Hnaguyn zhamanaknerits' minch'ev mer orerë, Yer., "Zangak – 97", 2008 (**In Armenian**).
4. Dokumenty vneshnej politiki SSSR /V 24-x tomax/. Glav. red. A. A. Gromyko, t. III (01 ijulja 1920 – 18 marta 1921), M., "Politizdat", 1959, t. IV (19 marta 1921 – 31 dekabrja 1921), 1960 (**In Russian**).
5. **Galoyan G. G.**, Hayastanë yev mets terut'yunnerë (1917–1923), Yer., "Gitut'yun", 1999 (**In Armenian**).
6. Genocid armjan: otvetstvennost' Turcii I objazatel'stva mirovogo soobsh'estva. Dokumenty I kommentarij v 2-x tomax. Sost., otv. red., avt. predisl. I comment. **Ju. G. Barsegov**, t. 2, ch. 2, M., "Gardariki", 2002 (**In Russian**).

7. **Hakobyan A. M.**, Khorhrdayin Hayastanë Moskvayi yev Karsi paymanagerum, Yer., “Gitut‘yun”, 2010 (**In Armenian**).
8. **Hakobyan A. M.**, Moskvayi 1921 t‘. marti 16 (18-i) paymanagirë hay zhoghovrdi chakatagrum, “Vëm” hamahaykakan handes, Yer., 2021, N 1 (**In Armenian**).
9. **Hakobyan H. V.**, Taragir hayut‘yan hayrenik‘ veradařnalu pahanji patmakan u iravakan himk‘erë, Yer., “Asoghik”, 2002 (**In Armenian**).
10. Hayastani azgayin arkhiv, f. 113, ts‘. 3, g. 19, mas 2, t‘. 464, f. 1440, ts‘. 1, g. 34, t‘. 10 (**In Armenian**).
11. **Hovhannisyan L. H.**, Haykakan harts‘i 1915–1923 t‘t‘. patmut‘yan himnaharts‘eri lusabanumë hayastanyan patmagitut‘yan mej (1991–2015 t‘t‘.), Yer., HH GAA patmut‘yan institut, 2020 (**In Armenian**).
12. **Hovhannisyan L. H.**, Rus-t‘urk‘akan gortsakts‘ut‘yunë yev 1921 t‘. marti 16-i Moskvayi paymanagirë hayastanyan patmagitut‘yan gnahatmamb (1991–2020 t‘t‘.), “Patmabanasirakan handes”, Yer., HH GAA, 2021, N 1 (**In Armenian**).
13. **Kazandzhjan R.**, K voprosu o datirovke Moskovskogo sovetско-tureckogo dogovora 1921 g., “Vestnik obsh‘estvennyx nauk”, NAN RA, 1999, N 1 (**In Russian**).
14. **Khach‘atryan K. H.**, Hay-řusakan haraberut‘yunnerë 1920–1922 t‘vakannerin, Yer., HH GAA patm. inst., 2007 (**In Armenian**).
15. **Khach‘atryan K. H., Suk‘iasyan H. K., Badalyan G. M.**, Khorhrdayin Hayastani yev LGHIM-i taratsk‘ayin korustnerë 1920–1930-akan t‘vakannerin, Yer., HH GAA patmut‘yan institut, 2015 (**In Armenian**).
16. **Maruk‘yan A. Ts‘.**, Hayots‘ ts‘eghaspanut‘yan hetevank‘neri haght‘aharman himnakhndirnerm u patmairavakan himnavorumnerë, Yer., Patmut‘yan institut, 2014 (**In Armenian**).
17. **Marukjan A. C.**, Istoriko-pravovoj analiz sovetско-tureckogo moskovskogo dogovora 1921 goda “O družbe I bratstve”, “Istoriko-filologicheskij zhurnal”, NAN RA, 2021, N 1 (**In Russian**).
18. **Melk‘onyan A. A.**, Ashot Melk‘onyan. Ardzanagrut‘yunnerum arka ë mi ket, vorë khach‘ ë k‘ashum Sevri dashnagri vra, “Ts‘eghaspanut‘yun yev hayrenazrkum: Chanach‘umits‘ hatuts‘um (hodvatsner yev harts‘azruyts‘ner)”, Yer., “Zangak” hrat., 2015 (**In Armenian**).
19. **Melk‘onyan A. A.**, Hayastani patmut‘yan yev zhoghovrdagrut‘yan himnaharts‘er (hodvatsneri zhoghovatsu), Yer., “Mitk‘” verlutsakan kentron, 2011 (**In Armenian**).
20. **Melk‘onyan A. A.**, Hayots‘ patmut‘yan dasern u patgamnerë, Yer., “Gitut‘yun”, 2013 (**In Armenian**).
21. **Melk‘onyan A. A.**, HH Azgayin zhoghovum HH GAA patmut‘yan instituti tnören Ashot Melk‘onyani yeluyt‘ë hay-t‘urk‘akan ardzanagrut‘yunneri kapakts‘ut‘yamb (2009 t‘. hoktemberi 1), “Ts‘eghaspanut‘yun yev hayrenazrkum: Chanach‘umits‘ hatuts‘um (hodvatsner yev harts‘azruyts‘ner)”, Yer., “Zangak” hrat., 2015 (**In Armenian**).
22. **Papyan A. A.**, Hayastani hanrapetut‘yunneri iravahajordut‘yan harts‘ë mijazgayin iravunk‘i tesankyunits‘, “Hayrenatirut‘yun: Hayots‘ pahanjatirut‘yan iravakan himunk‘nerë yev harakits‘ harts‘er (Hodvatsneri zhoghovatsu)”, Yer., “Asoghik”, 2012 (**In Armenian**).
23. **Papyan A. A.**, Hayastani yev T‘urk‘iayi mijev divanagitakan haraberut‘yunner hastatelu yev “ëndhanur sahmanë voroshogh hamapataskhan paymanageri” masin, “Hayrenatirut‘yun...”, Yer., “Asoghik”, 2012 (**In Armenian**).
24. **Papyan A. A.**, Hayastann u T‘urk‘ian iravasu ch‘en “hastatelu” sahmanë, “Hayrenatirut‘yun...”, Yer., “Asoghik”, 2012 (**In Armenian**).

25. **Papyan A. A.**, Haykakan harts'i lutsman iravakan himk'ern u ughinerë, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
26. **Papyan A. A.**, Hayots' petakanut'yan gaghap'arakan himk'ë, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
27. **Papyan A. A.**, Karsi paymanagirn u Hayastani Sovetakan Sots'ialistakan Hanrapetut'yan iravakan kargavichakn ëst mijazgayin iravunk'i, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
28. **Papyan A. A.**, Karsi paymanagri (ch'vaverats'man yev harakits' harts'eri shurj, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
29. **Papyan A. A.**, Krkin T'urk'iaiyi koghmits' Hayastani apashrjap'akman yev Karsi paymanagri hetevank'neri hnaravor chanach'man masin, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
30. **Papyan A. A.**, Moskvayi rus-t'urk'akan paymanagri (16 marti, 1921) p'ordzak'nnut'yunë' ëst mijazgayin iravunk'i, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
31. **Papyan A. A.**, Nakhkin sovetakan hanrapetut'yunneri chanach'man, ink'noroshman yev sahmanneri masin, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
32. **Papyan A. A.**, Petut'yunneri yev paymanagrieri nkatmamb iravahajordut'yan harts'ë, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
33. **Papyan A. A.**, P'ok'r, bayts' karevor chshtum kam ye'rb ë storagrvel Alek'sandrapoli paymanagirë, "Hayrenatirut'yun...", Yer., "Asoghik", 2012 (**In Armenian**).
34. **Poghosyan St. K., Poghosyan K. St.**, Haykakan harts'i yev hayots' ts'eghaspanut'yan patmut'yun, hat. III (Haykakan harts'ë 1920–1922 t'verin), girk' II, Yer., "Hayastan", 2003 (**In Armenian**).
35. **Zohrabyan E. A.**, Sovetakan Rusastanë yev hay-t'urk'akan haraberut'yunnerë (1920–1922 t't'), Yer., Yerevani hamalsarani hrat, 1979 (**In Armenian**).